Կօրէկօն նախագահում է այն յանձնաժողովին, որ բարձրագոյն նշանակուած է ժամուլի վերաբերեալ օրէնսդրութիւնը վերաքննելու համար.

Վաղուց արդէն խօսւում էր Կովկասի արդի կառավարութեան ձևը վերածել փոխարքայութեան և այժմ արդէն, ինչպէս հաղորդեց հեռագիրը Պ. Բուրգից, Բարձրագոյն հրովարտակով Կովկասի փոխարքայ է նշանակուել կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը։

Լուրը առնելուն պէս Նորին Սրբութիւն ամենայն Հայոց Վեհ. կաթուղիկոսը անցեալ փետրուարի 19-ին Պ. Բուրգ ուղարկեց հետևեալ շնորհաւորական հեռագիրը.

«Նորին Պայծառափայլութեան Կովկասի Փոխարքայ կոմս Իլլարիոն Իվանովիչ Վօրոնցով-Դաշկովին.

«Իմ և ամբողջ հօտի կողմից ցնծագին շնորհաւորում եմ Ձերդ Պայծառափայլութեան Ձեր Բարձրագոյնս նշանակուելը այժմեան ծանր ժամանակներում, որին կոչուած էք Թագաւոր Կայսեր Բարձր հրամանով. խորապէս հաւատում եմ, որ Ձեր յայտնի բարեացակամութեան շնորհիւ, որ տածում էք դէպի Կովկասեան ազգաբնակութիւնը, դուք իբրև Կովկասեան հին աւանդութիւնների ներկայացուցիչ, կարող կը լինէք Կովկասը խաղաղացնել և անդորրացնել։ Աղօթում եմ Աստծուն, որ Ձեզ ոյժ և կարողութիւն տայ առաջիկայ գործունէութեան համար։ Ընդ սին ես Պետերբուրգ գտնուած իմ պատգամաւորութեան յանձնարարեցի անձամբ շնորհաւորել Ձեզ իմ և իմ հօտի կողմից»։ Մկրտիչ Կաթուղիկոս ամենայն Հայոց.

Վեհ. Կաթողիկոսը Նորին Պայծառափայլութիւնից ստացաւ հետևեալ պատասխանը.

«Թիֆլիս. Նորին Սրբ. ամենայն Հայոց կաթողիկոսին.

«Սրտագին շնորհակալ եմ Ձերդ Սրբութիւնից Ձեր համակրական հեռագրի համար, աղօթում եմ Աստծուն ոյժ և կարողութիւն տալ ինձ Թագաւոր Կայսեր կամքը կատարելու, անդորրելու ազգաբնակութիւնը և ապահովելու ջերմ սիրով սիրածս Կովկասի զարգացումը։ Ցանձնում եմ ինձ Ձեր մաքրափայլ աղօթքներին»։ Կոմս Վօրոնցով-Դաշկով.

Ռուսասատանի լրագիրները հաղորդում են, որ մեր նորահաստատ փոխարքան Պ.-Բուրգից դէպի Կովկաս կը մեկնի ներկայ մարտ ամսին։